

# ՄԻԿՐՈԲԻՈԼՈԳԻԱՅԻ ՀԱՐՑԵՐ—ВОПРОСЫ МИКРОБИОЛОГИИ

ՊՐԱԿ 4 (XIV)

1969

Վ ы պ ү с կ 4 (XIV)

Ռ. Ս. ՔԱՐԻՄՅԱՆ, Հ. Մ. ՀԱԽԻԵՏԱՆ, Ի. Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԱՐԲԵՐ ՍՆՍԴԱՄԻՋԱՎԱՅՐԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ  
ՇԱՔԱՐԱՍՆԿԵՐԻ ՎԻՏԱՄԻՆ ՍԻՆԹԵԶԵԼՈՒ ՈՒԽԱԿՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Հայտնի է, որ առանձին խումբ միկրոօրգանիզմներ, ինչպես և շաքարասնկերի շատ ներկայացուցիչներ, զարգանում են արհեստական սննդամիջավայրերում և այդ հասարակ, պարզ միացություններից սինթեզում կենդանի օրգանիզմի կենսագործունեության պրոցեսներին օժանդակող կարևոր նյութեր:

Այս ուղղությամբ բազմապիսի ուսումնասիրություններ կատարողներից ոմանք, ինչպես օրինակ՝ Մելսելը, Պոմոզնիկովան, Տրոֆիմովան (1949) հանգել են այն եղանակացության, որ արհեստական ագարային սննդամիջավայրում պանտոտենաթթվի բացակայությամբ Saccharomyces ludwigii-ն չի աճում: Նա աճում է այն գեպքում միայն, եթե տվյալ միջավայրի մակերեսին, այդ շաքարասնկերից բացի, աճեցվում է պանտոտենաթթվի կարիք չունեցող, սակայն տվյալ վիտամինը արտադրող մի այլ շաքարասունկ կա:

Տրոֆանովը և Սոլովյովը (1949) ցույց են տվել, որ Sacch. cerevisiae և Sacch. Carlsbergensis շաքարասնկերը պիրիդօքսին պարունակող արհեստական սննդամիջավայրում առաջացնում են պիրիդօքսալֆոսֆատ: Պիրիդօքսինի բացակայության պայմաններում Sacch. cerevisiae-ն պիրիդօքսալֆոսֆատ քիչ է առաջացնում, կամ կորցնում է իր այդ հատկությունը:

Կրետովիլը և Կրաուլեն (1961 ա, բ) պարզել են, որ Sacch. cerevisiae-ն ամոնիում պարունակող սննդամիջավայրում նպաստում է ա ալանինի, մասամբ էլ ասպարագինային ու գլյուտամինային թթուների առաջացմանը:

Տորնը (Thorne, 1941) ուսումնասիրել է Sacch. cerevisiae-ն ազոտի աղբյուր հանդիսացող 20 տարեր ամինոթթու պարունակող սննդամիջավայրում: Նա շաքարասնկի ամենալավ աճեցողություն նկատել է գլյուտամինաթթվի, ալանինի, սերինի, կամ մետիոնինի առկայության պայմաններում: Մի այլ աշխատությունում Տորնը (Thorne, 1945) նշում է նաև, որ ինչքան շատ է լինում

ամիսնոթում սննդամիջավայրում, այնքան թիշ պահանջ է ունենալ շաբարաստնեց պերիոդափակնի:

Լոգինովայի և Վերիովցևայի (1963) հետազոտություններում *Saccharomyces XII* ռասայի սկզբնային և չերմակայուն ձևերի ամիսնոթունների պահանջի վերաբերյալ փորձերը ցույց են տվել, որ երկու ձևերն էլ Յ-ալանինի պահանջ են զգում, ըստ որում չերմակայուն ձևը պահանջում է նաև ամման տարրեր գործուներ, այդ պատճառով նրա անեցողությունը զանդաղում է:

Դիկանսկայան (1962) իր ուսումնասիրություններում նշել է, որ 4—5% զլլուկոզը մի կողմից նպաստում է շաբարաստների ամենացողությանը, մյուս կողմից էլ ոիրոֆլավինի սինթեզելուն, իսկ 10%-ը մնջում է ոիրոֆլավինի սինթեզման պրոցեսը:

Նրա կարծիքով՝ Պեպտոնը խթանում է շաբարաստների աճմանը, բայց շի ապահովում մեծ բանակությամբ ոիրոֆլավինի սինթեզ:

Ելնելով վերոհիշյալ փորձերից, մենք նպատակազրկեցինք ուսումնասիրել տարրեր սննդամիջավայրերի ազգեցությունը շաբարաստների՝ վիտամին սինթեզելու ունակության վրա:

Շաբարաստների՝ վիտամին սինթեզելու ունակությունը բարձրացնելու նպատակով, օգտագործել ենք Հանգենի արհեստական սննդամիջավայրի հետազարդ գործություններով:

	1-ին	2-րդ	3-րդ	4-րդ	5-րդ	6-րդ
Գլուկոզ	50	25	10	50	50	50
Պեպտոն	10	10	10	20	15	5
$\text{KH}_2\text{PO}_4$	3	3	3	3	3	3
$\text{MgSO}_4$	5	5	5	5	5	5

Միաժամանակ օգտագործվել են նաև զարու ածիկի և խաղողի բաղցուների ազարային սննդամիջավայրերը:

Մեր փորձերի ընթացքում ուսումնասիրել ենք *Sacch.* ovifor-mis-ին պատկանող 715, 710, 708, 43, *Sacch.* vini-ին՝ 32, 33, 500, 45, *Sacch.* cerevisiae-ին՝ 405, 16, 345, *Sacch.* steineri-ին՝ 3 և *Candida krusei*-ին պատկանող 507 շաբարաստները:

Հիշյալ շաբարաստները մեկուսացվել են Հայկական ՍՍՀ ԳԱ միկրոբիոլոգիայի ինստիտուտի խմբուղ միկրոօրգանիզմների:

<sup>1</sup> Հանգենի առաջարկած սննդամիջավայրը համարել ենք որպես ստուգի:  
(1) Հանգենի մյուս փոփոխած սննդամիջավայրերի համար:

շաբորատորիայում: Ուսումնասիրվող շաքարասնկերից բիոզանգ-ված ստանալու համար նրանք ցանվել են Պետրիի թասերում՝ վերը նշված համապատասխան ագարային սննդամիջավայրերում: Այ-նուշետև, այդ բիոզանգվածներն զգուշությամբ հավաքելուց և օգալոր վիճակի հասցնելուց հետո, բյուլետաներում  $40^{\circ}$  ջերմության պայմաններում կայուն քաշի են բերվել, ապա փորձանոթներում համապատասխան քանակությամբ թորած ստերիլ ջուր ու մի քա-նի կաթիլ տոլուոլ (վարակազրկելու նպատակով) ավելացնելուց հետո  $48$  ժամ պահվել են թերմոսատում ջերմության  $25-29^{\circ}\text{C}$ -ում: Այդ բուրքից հետո հիշյալ նյութը ավտոկավում մեկ մթնոլոր-տային ճնշման պայմաններում  $30$  րոպե տևողությամբ հիգրովի-զացվել և դիլտրի թղթով քամվել է:

Շաքարասնկային այդ քամվածքներում որոշել ենք Յ խմբին պատկանող թիամինի (B<sub>1</sub>), պանտոտենաթթվի (B<sub>5</sub>), նիկոտինա-թթվի (PP կամ B<sub>6</sub>), պիրիդօքսինի (B<sub>6</sub>) և բիոտինի (B<sub>7</sub>) քանակ-ները միկրոբիոլոգիական մեթոդով՝ ֆոտոէլեկտրոկոլորիմետրի միջոցով:

Որոշված վիտամինների քանակը ցույց է տված 1 գ չոր-նութում գամմաներով ( $\gamma$ ):

Վիտամինների որոշման համար օգտագործել ենք ՈՒԴԵՐԻ արհեստական հեղուկ սննդամիջավայրը:

Նախքան սննդամիջավայրի պատրաստելու, շաքարը (ակտի-վացված ածուխով), ամանեղնենը (ծծմբական խիտ թթվի և բիք-րոմատի խառնուրդով) վիտամինազրկել ենք:

Այս կամ այն վիտամինի որոշման համար սննդամիջավայ-րին ավելացվել են բոլոր վիտամինները, բացառությամբ որոշվող վիտամինի, ընդ որում թիամին, պանտոտենաթթու, նիկոտինա-թթու և պիրիդօքսին ավելացվել է յուրաքանչյուրից  $1000 \gamma/\text{մլ}$ , իսկ բիոտին՝  $0,5 \gamma/\text{մլ}$ :

Որոշվող վիտամինն օգտագործվել է որպես ստանդարտ՝ հա-մապատասխան նոսրացումներով:

Փորձերում որպես տեսա-օրգանիզմներ օգտագործել ենք —Zygosaccharomyces traxianus, Saccharomyces ludwigii և Endomyces magnusii ինդիկատորալին շաքարասնկերը:

Մեր ուսումնասիրություններում տարբեր ինդիկատորային կուլտուրաների կենսագործունեության վրա շաքարասնկային մզվածքների ազդեցության վերաբերյալ տվյալներն ամփոփված են աղյուսակներ  $\text{№ 1, 2, 3, 4, և 5-ում}$ :

Ինչպես ցույց են տալիս այդ աղյուսակներում բերված տվյալները, շաքարասնկերի վիտամին սինթեզելու հատկությունը կախված է ինչպես կուլտուրայի տեսակից, այնպես էլ այն շրջապատող միջավայրից, որտեղ նրանք աճեցվում են:

Հանգնի առաջարկած սննդամիջավայրում շաքարի ու պինդառունի քանակները փոփոխվելու դեպքում, ինչպես տեսնում ենք, փոխվում է նաև շաքարասնկի՝ տարրեր վիտամիններ սինթեզելու հատկությունը:

Այսպես, օրինակ՝ աղյուսակ 1-ում բերված թվերը ցույց են տալիս, որ *Saccharomyces cerevisiae* 345 շտամը, Հանգնի 1-ին սննդամիջավայրի 1 գ շոր նյութում առաջացրած 2,46 γ/գ պահանջունաթթվի համեմատությամբ գրեթե 8 անգամ շատ պահանջնաթթու է սինթեզել Հանգնի 3-րդ և Հանգնի 5-րդ սննդամիջավայրերում (19, 87—20, 585 γ/գ): *Saccharomyces vini* 500 շաքարասունկը ավելի շատ վիտամին է սինթեզում Հանգնի 2-րդ և Հանգնի 3-րդ սննդամիջավայրերում (114—100,78 γ/գ), սառողիչ միջավայրի (68,08 γ) համեմատությամբ մոտ երկու անգամ ավելի:

Մինչդեռ *Saccharomyces oviformis* 43 շաքարասնկի՝ վիտամին սինթեզելու հատկությունը համեմատարար բարձրանում է դարսու ածիկի քաղցուի 30, 48 γ), ինչպես և Հանգնի 3-րդ (39,32 γ) ու Հանգնի 5-րդ (35,5 γ) սննդամիջավայրերում աճեցնելու դեպքում: Այսուղեղ հարկավոր է նշել որ Հանգնի 1-ին սննդամիջավայրի համեմատությամբ Հանգնի 3-րդում պարունակվող շաքարի քանակը թեև 5 անգամ պակաս է, բայց սինթեզված վիտամինի քանակը մոտ 13 γ-ով ավելի է: Խնձ վերաբերում է խաղողաշումբից պատրաստված միջավայրին, ապա ստուգիչ միջավայրի համեմատությամբ այնտեղ սինթեզված պանտուենաթթվի քանակը ընդհանրապես բիշ է:

Աղյուսակ 2-ում ցույց է տրված սինթեզված թիամինի քանակը: Ինչպես երևում է տվյալ աղյուսակի թվերից, *Sacch. cerevisiae* 16 շտամը թիամինի մեծ քանակ սինթեզում է Հանգնի 1-ին սննդամիջավայրում աճեցնելու դեպքում և 1 գ շոր նյութում այն հասնում է 138,75 γ/գ-ի: Հանգնի 3-րդ սննդամիջավայրում սինթեզված վիտամինի քանակը 108,750 γ/գ է, իսկ բիշ քանակ թիամին նա սինթեզում է գարու ածիկից պատրաստված սննդամիջավայրում (11,08 γ):

Այսպիսով, տվյալ շաբարասունկը բոլորից շատ թիամին սինթեզում է Հանգեն 1-ին (ստուգիլ) միշավայրում: Մինչդեռ Sacch. oviformis 715 շտամը գարու ածիկից պատրաստված քաղցուի ագարային սննդամիշավայրում աճեցնելու դեպքում սինթեզված թիամինի քանակը մոտ 7 անգամ (11,78 %) ավելի է Հանգենի 1-ին սննդամիշավայրում աճեցրած շաբարասունկերի սինթեզված թիա-

Աղջուսակ 1

Տարրեր սննդամիշավայրերում աճեցրած շաբարասունկերի կողմէց սինթեզված պանտունաթթվի քանակը 1 գ չոր նյութում %-ով

սննդամիշավայրեր	Sacch. oviformis 43	Sacch. vini 500	Sacch. cerevisiae 345
1-ին (Չուր-1000մլ, գլյուկոզա 50գ, պեպտոն 10գ, KH <sub>2</sub> PO <sub>4</sub> -3գ, MgSO <sub>4</sub> -5գ)	26,06	68,08	2,46
2-րդ (Չուր-1000մլ, գլյուկոզա 25գ, պեպտոն-10գ, KH <sub>2</sub> PO <sub>4</sub> -3գ, MgSO <sub>4</sub> -5գ)	26,908	114,21	6,49
3-րդ (Չուր-1000մլ, գլյուկոզա 10գ, պեպտոն-10գ, KH <sub>2</sub> PO <sub>4</sub> -3գ, MgSO <sub>4</sub> -5գ)	39,32	100,78	5,99
4-րդ (Չուր-1000մլ, գլյուկոզա 50գ, պեպտոն 20գ, KH <sub>2</sub> PO <sub>4</sub> -3գ, MgSO <sub>4</sub> -5գ)	24,124	15,00	19,87
5-րդ (Չուր-1000մլ, գլյուկոզա 50գ, պեպտոն-15գ, KH <sub>2</sub> PO <sub>4</sub> -3գ, MgSO <sub>4</sub> -5գ)	35,5	86,32	20,585
6-րդ (Չուր-1000մլ, գլյուկոզա-50գ, պեպտոն-5գ, KH <sub>2</sub> PO <sub>4</sub> -3գ, MgSO <sub>4</sub> -5գ)	4,944	23,92	13,20
Գարու ածիկային քաղցու (5% շաբար)	30,48	54,41	7,90
Խաղողի քաղցու (22% շաբար)	4,00	1,026	

Մինի քանակից: Sacch. vini 45 շաբարասունկը Հանգեն 5-րդ միշավայրում աճեցնելու դեպքում 2 անգամ ավելի վիտամին է առա-

շացեռմ, իսկ Sacch. vini 33 շտամբ Հանգնի 4-րդ միջավայրում առաջացնում է 213 լ/զ թիամին, Հանգնի 1-ին միջավայրում առաջացածից գրեթե 2,5 անգամ ավելի:

Ինչպես տեսնում ենք, Հանգնի 4-րդ սննդամիջավայրում պեպտոնի պարունակությունը Հանգնի 1-ին սննդամիջավայրի համեմատությամբ 2 անգամ ավելի է, իսկ 5-րդ սննդամիջավայրում այս 5 գ-ով է ավելի, և շատ հավանական է, որ պեպտոնը մասամբ նպաստում է Sacch. vini 45 և 33 շաբարասնկերի վիտամին սինթեզելուն:

Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 3-ում բերված թվերը պիրիդօքսինի առաջել մեծ քանակ սինթեզում է Sacch. vini 32 շտամբ Հանգնի 4-րդ (154, 65 շ) ու Հանգնի 6-րդ (181,0 շ) սննդամիջավայրերում և մասամբ էլ Sacch. oviformis 710 շաբարասունկը Հանգնի 3-րդ սննդամիջավայրում (129,48 շ) աճեցնելու դեպքում: Այսպիսով, Հանգնի 1-ին սննդամիջավայրի համեմատությամբ, առաջին շտամբ զրեթե 6 անգամ, իսկ երկրորդը մոտ 5 անգամ ավելի պիրիդօքսին է սինթեզում: Ի գեպ՝ Հանգնի 1-ին սննդամիջավայրի համեմատությամբ Հանգնի 6-րդում պեպտոնի քանակը կիսով շափ պակաս է, 4-րդում՝ կրկնակի անգամ ավելի, իսկ 3-րդում նույն քանակն է, ինչ 1-ինում: Այսուղից էլ կարելի է անել այն հետևությունը, որ պեպտոնը ոչ բոլոր դեպքերում է այս կամ այն շաբարասնկի նկատմամբ խթանող աղղեցություն ունենում երբեմն նույնիսկ խոշընդուռ է հանդիսանում, և այդ է պատճառը, որ մեկի մոտ շատ վիտամին է սինթեզվում, իսկ մեկ ուրիշի մոտ՝ բիշ:

Շաբարասնկերի սինթեզած նիկոտինաթթվի վերաբերյալ տվյալներն բերված են աղյուսակ 4-ում: Այստեղ կարևոր է նշել, որ նիկոտինաթթվով հարուստ են Sacch. cerevisiae-ին պատկանող շտամները, ընդ որում Sacch. cerevisiae 405 շտամբ Հանգնի 4-րդ և 5-րդ սննդամիջավայրերում աճեցնելու դեպքում զրեթե 3 անգամ (605, 79—606,00 շ/զ) ավել նիկոտինաթթու է սինթեզում, քան Հանգնի 1-ինում (193,46 շ/զ), իսկ Sacch. oviformis 708-ը Հանգնի 3-րդ և 5-րդ սննդամիջավայրում աճեցնելու դեպքում, համեմատած Հանգնի 1-ին սննդամիջավայրի հետ, միայն 60—105 շ-ով ավելի նիկոտինաթթու է սինթեզում:

Աղյուսակ 5-ում բերված տվյալները ցույց են տալիս, որ Sacch. vini 32 շաբարասնկի՝ բիտին սինթեզելու համար բարենպատ միջավայր է հանդիսանում գարու ածիկային քաղցուն: Այս

Աղյուսակ 2

Տարրեր սննդամիջավայրերում աճեցրած շաքարասնկերի կողմից սինթեզած  
թիամինի քանակը 1 գ չոր նյութում՝ γ-ռի

սննդամիջավայրեր	շաքարասնկեր			
	Sacch. cerevisiae 16	Sacch. oviformis 715	Sacch. vini	
			33	45
1-ին	138,75	11,78	85,80	54,86
2-րդ	74,37	9,00	67,23	38,88
3-րդ	108,75	18,72	49,42	23,88
4-րդ	15,00	6,00	213,00	30,064
5-րդ	13,86	24,99	30,96	104,00
6-րդ	41,375	15,9	32,11	51,50
դարու ածիկային քաղցու (5% շաքար)	11,08	81,09	16,20	80,00
խաղողի քաղցու (22% շաքար)	—	52,46	30,18	32,00

Աղյուսակ 3

Տարրեր սննդամիջավայրերում աճեցրած շաքարասնկերի կողմից սինթեզած  
պիրիդօքոնինի քանակը 1 գ չոր նյութում՝ γ-ռի

սննդամիջավայրեր	շաքարասնկեր		
	Sacch. vini 32	Sacch. cere- visiae 16	Sacch. ovi- formis 710
1-ին	35,04	7,90	26,78
2-րդ	61,58	7,85	16,99
3-րդ	56,47	12,12	129,48
4-րդ	154,65	8,25	39,0
5-րդ	56,00	4,91	23,4
6-րդ	181,00	1,33	8,71
դարու ածիկային քաղցու (5% շաքար)	37,63	10,27	7,24
խաղողի քաղցու (22% շաքար)	—	—	—

Աղյուսակ 4

Տարրեր սննդամիջավայրերում աճեցրած շաքարանկերի  
կողմէից սինթեզած նիկոտինաթթվի քանակը 1 գ շոր  
նյութում՝ %-ով

սննդամիջավայրեր	շաքարանկեր	
	Sacch. cerevisiae 405	Sacch. oviforans 708
<i>Հարուսացած բաղադրություն</i>	1-ին	193.46
	2-րդ	156.22
	3-րդ	274.12
	4-րդ	605.79
	5-րդ	606.00
	6-րդ	376.35
<i>Պարու ածիկային բաղադրություն (5% շաքար)</i>	317.55	268.80
<i>Խաղողի բաղադրություն (22% շաքար)</i>	—	—

Աղյուսակ 5

Տարրեր սննդամիջավայրերում աճեցրած շաքարանկերի սինթեզած բիոսինի քանակը 1 գ շոր նյութում՝ %-ով

սննդամիջավայրեր	Sacch. vini 32	Candida krusei 507	Sacch. steinertii 3
<i>Հարուսացած բաղադրություն</i>	1-ին	1.738	16.875
	2-րդ	2.36	28.00
	3-րդ	3.93	35.65
	4-րդ	16.10	34.65
	5-րդ	3.43	16.56
	6-րդ	13.65	21.41
<i>Պարու ածիկային բաղադրություն (5% շաքար)</i>	59.79	31.87	10.03
<i>Խաղողի բաղադրություն (22% շաքար)</i>	—	—	5.37

սննդամիջավայրեր տվյալ շաքարասունկը Հանգեն 1-ին սննդամիջավայրի 1.738 γ/գ-ի դիմաց սինթեզում է 59.76 γ/գ բիոսին։  
Candida krusei 507 շտամը Հանգենի 1-ին սննդամիջավայրի

Հետ համեմատած միջին թվով 2 անգամ ավելի բիոտին է սինթեզում գարու ածիկային քաղցուի, Հանգենի 4-րդ և Հանգենի 3-րդ սննդամիջավայրերում աճեցնելու դեպքում, իսկ *Sacch. steineri* 3 շտամը գարու ածիկի քաղցու ագարային միջավայրում աճեցնելու դեպքում 5,5 անգամ ավելի բիոտին է սինթեզում:

Ինչպես երևում է փորձի տվյալներից, բիոտին սինթեզելու համար մասսամբ լավ միջավայր է գարու ածիկային քաղցուն, սակայն նա չի ապահովում բիոտինի սինթեզումը առավել քանակությամբ:

Այսպիսով, շաքարասնկերի կողմից վիտամին սինթեզելու ունակության վրա տարրեր սննդամիջավայրերի աղղեցությունը պարզելու առնչությամբ մեր կատարած փորձերի տվյալներն իմ ամփոփելով, կարելի է հանգել հետևյալ եզրակացությանը:

1. Թե՛ գարու ածիկի և թե՛ խաղողի քաղցուները մեծ մասսամբ բարենպաստ սննդամիջավայրեր չեն շաքարասնկերի՝ մեծաքանակ վիտամին սինթեզելու համար:

2. Հանգենի փոփոխված սննդամիջավայրերը բարձրացնում են տարրեր շաքարասնկերի վիտամիններ սինթեզելու ունակությունը:

3. Շաքարասնկերի տարրեր շտամներ ցուցաբերում են իրարից խիստ տարրեր քանակությամբ վիտամիններ սինթեզելու ունակություն:

Р. С. Կարմյան, Р. М. Ախինյան, И. О. Карапетян

### Влияние различных сред на витаминосинтезирующую способность дрожжей

#### Р е з ю м е

Для повышения интенсивности витаминообразования дрожжи культивировались на модифицированных средах Ганзена, ячменно-солодовом и виноградном суслах.

Исследованы 13 штаммов дрожжей, относящихся к видам *Saccharomyces oviformis*, *Saccharomyces vini*; *Saccharomyces cerevisiae*, *Saccharomyces steineri* и *Candida krusei*, которые

были выделены в лаборатории бродильных микроорганизмов Института микробиологии АН Армянской ССР.

Определение витаминов ( $B_1$ ,  $B_2$ ,  $B_5$ ,  $B_6$ ,  $B_7$ ) проводилось из жидкой среде Ридера.

Результаты исследований показали следующее:

1. Естественные среды солодового и виноградного сусла в большинстве случаев неблагоприятны для образования повышенного количества витамина в дрожжах.

2. Модифицированные среды Ганзена являются лучшими для синтеза некоторых витаминов (биотин, пиродоксин, пантотеновая и никотиновая кислоты).

3. Разные штаммы дрожжей синтезируют разное количество витаминов.

R. S. Karimian, R. M. Hakhnian, I. O. Karapetian

### The influence of various media on the vitamin producing ability of yeasts

#### Summary

To enhance the intensity of vitamin formation 13 strains of yeasts representing the *Sacch. vini*, *Sacch. oviformis* *Sacchu. cerevisiae*, *Sacch. steineri* and *Candida krusei* species, isolated in Armenia, have been cultivated in the modified media of Hansen, the barley-malt and the grape musts.

The results of the analyses are listed below:

1) the natural media of barley and grape musts prove in most cases unfavourable for the formation of an increased amount of vitamins in the yeasts;

2) the modified media of Hansen are best for the synthesis of a number of vitamins (biotin, pyridoxin, pantothenic and nicotinic acids);

3) the various strains of yeasts synthesize different amounts of vitamins.

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Возняковская Ю. М. 1962. Образование витаминов микроорганизмами, обитающими на здоровых растениях. «Агробиология», I (133), 105.

- Диканская Э. М. 1962. О повышенном образовании рибофлавина дрожжами. «Микробиология», XXXI, 1, 35.
- Кретович В. Л. и Краузе Е. 1961. Биосинтез аминокислот у пекарских дрожжей в присутствии ионов аммония. «Микробиология», XXX, 5, 881.
- Кретович В. Л. и Краузе Е. 1961. Биосинтез аминокислот из пировиноградной кислоты и аммония дрожжей. АН СССР, 136, 6, 1474.
- Логинова Л. Г. и Верховцева М. И. 1963. Потребность термотерпантных дрожжей в различных аминокислотах. «Микробиология», XXXII, 2, 216.
- Мейсель М. Н., Помощников Н. А. и Трофимова Н. П. 1949. Биологический синтез пантотеновой кислоты из  $\beta$ -аланина и некоторых его производных. «Биохимия», 14, 4, 360.
- Труфанов А. В., Соловьева З. И. 1949. Биосинтез пиридоксал-фосфата дрожжами. «Биохимия», 14, 4, 327.
- Thorpe R. S. W. 1941. J. Inst. Brew., 47, 255.
- Thorpe R. S. W. 1945. J. Inst. Brew., 50, 114.